Սիպիլ

Իտեալը

Լուսնին շողն է զոր կը մարե շուտ արփին,
Հուր երազ մը որ այգուն դեմ կը դեղնի,
Փայլակն է այն շանթին վաղանց գարնային,
Ծաղիկ մ՚որուն թերթերն հովեն կը թափին:

Հուր երազ մը որ այգուն դեմ կը դեղնի,
Ծիածանին լույս ժապավենն է նըրբին,
Ծաղիկ մ՚որուն թերթերն հովեն կը թափին,
Լուրթ կամարին հյուսիսյգն է ծիրանի:

Ծիածանին լույս ժապավենն է նըրբին,
Փըշոտ վարդ մը որմե լանջքըդ կ՚արյունի,
Լուրթ կամարին հյուսիսայգն է ծիրանի,
Միշտ փըշըրվող ձույն փըրփուրն է քարափին:

Փըշոտ վարդ մը որմե լանջքըդ կ՚արյունի,
Փետուր մըն է թըռած կուրծքեն կարապին,
Միշտ փըշըրվող ձյուն փըրփուրն է քարափին,
Ինչ որ հովը, օդը, ջուրը կը տանի:

Փետուր մըն է թըռած կուրծքեն կարապին,
Սուրբ համբույր մը եթերին մեջ հոլանի,
Ինչ որ հովը, օդը, ջուրը կը տանի,

Իտեալն է՝ օրորն հոգվույն մըրափին:

Սուրբ համբույր մը եթերին մեջ հոլանի,
Կույսն անմատույց բոց տենչերու տարափին,

Իտեալն է՝ օրորն հոգվույն մըրափին,
Խըռովիչ հույլն անուրջներու պատանի:

Կույսն անմատույց բոց տենչերու տարափին,
Ըզմեզ կյանքին կապող ոսկի մատանի,
Խըռովիչ հույլն անուրջներու պատանի,
Սիրո երգը սըրտի խորունկ պարապին:

1898